ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 25-ից 29-ը Ֆրանսիայի Հանրապետություն (ք.Փարիզ և ք. Նիցցա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Միքայել Փաշայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ֆրանսիայի Հանրապետություն, ք.Փարիզ և ք.Նիցցա նոյեմբերի 25-ից 29-ը

4. Հրավիրող կողմը՝

Ֆրանսիայի Հանրապետության Հանրային ֆինանսների գլխավոր վարչություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝

1. «Հարկային տեսուչներ առանց սահմանների - քրեական քննություն» պիլոտային ծրագրի և «Հարկային տեսուչներ առանց սահմանների - տրանսֆերային գնագոյացում» ծրագրերի շրջանակներում հաստատել պլաններ, որոնք հիմք են հանդիսանալու մինչև 2020թ. վերջ կայանալիք եռակողմ համագործակցության, ինչպես նաև ՊԵԿ-ում ոլորտային բարեփոխումներ իրականացնելու համար,

2. Մասնակցել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի 10-րդ հոբելյանական հանդիպմանը,

3. Հայաստանի հարկային վարչարարությանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում հարկային ոլորտում ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված միջոցների ուսումնասիրությունը:

6. Քննարկված թեմաները

«Հարկային տեսուչներ առանց սահմանների - քրեական քննություն» պիլոտային ծրագրի և «Հարկային տեսուչներ առանց սահմանների - տրանսֆերային գնագոյացում» ծրագրերի շրջանակներում այցի ընթացքում ՊԵԿ պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաև ՏՀԶԿ հարկային ծառայությունների ֆորումի քարտուղարության ղեկավար Պիտեր Գրինի հետ և քննարկել Պետական եկամուտների կոմիտեի ֆորումին անդամակցելու հարցը:

Գլոբալ ֆորումի 10-րդ՝ հոբելյանական լիագումար նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել 10 տարիների ընթացքում հարկային թափանցիկության բնագավառում գրանցված հաջողություններին, ինչպես նաև բոլոր անդամ երկրներում տեղեկությունների փոխանակման և հարկման նպատակով թափանցիկության միջազգային ստանդարտների ներդրմանը:

Հայաստանի հարկային վարչարարությանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում ճանաչողական այցի ընթացքում քննարկվել են Ֆրանսիայի հարկային ստուգումների համակարգերին վերաբերվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

«Հարկային տեսուչներ առանց սահմանների - քրեական քննություն» պիլոտային ծրագրի և «Հարկային տեսուչներ առանց սահմանների - տրանսֆերային գնագոյացում» ծրագրերի շրջանակներում այցի ընթացքում քննարկվել են քրեական հետաքննության և տրանսֆերային գնագոյացման ոլորտներում հսկողության գործիքների կիրառման լավագույն փորձ ունեցող Իտալիայի հարկային մասնագետների ՊԵԿ-ի կողմից իրականացվող ոլորտային ստուգումներին և հարկային հսկողության իրականացման գործընթացներին՝ կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու նպատակով ներգրավվելու հարցերը:

«Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման» գլոբալ ֆորումի տասներորդ տարեդարձին նվիրված հատուկ լիագումար նիստի ընթացքում քննարկվել են մի շարք կարևոր հարցեր, ինչպիսիք են՝

- G20- ի, ՏՀԶԿ-ի (OECD) և Գլոբալ Ֆորումի կողմից համատեղ աշխատանքի արդյունավետությունը,
- Հարկային թափանցիկության մակարդակի ակնհայտ բարձրացումը,
- Բանկային գաղտնիքի վերացման ուղղությամբ իրականացված աշխատանքների շոշափելի արդյունքները,
- Հարկային մարմինների միջև համագործակցության մակարդակի բարձրացումը,
- Հարկային մարմինների միջև միջսահմանային համագործակցության հարկային թափանցիկությունը:

Հայաստանի հարկային վարչարարությանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում ճանաչողական այցի ընթացքում ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Միքայել Փաշայանը հանդիպել է Հանրային ֆինանսների գլխավոր դեպարտամենտի տնօրենի և ստուգումների վարչության պետի հետ և քննարկվել են հետևյալ հարցերը՝

- Հարկման ծրագրերի վերահսկում,
- Փոքր և միջին ձեռնարկությունների համար աուդիտի մեթոդներ,
- DGFIP ռիսկերի վերլուծության ծրագիր («Sirius Pro» (ընկերություններ) և «Sirius Part» (անհատներ)),
- ներքին և արտաքին տեղեկատվության մոբիլիզացում և վերլուծություն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

«Հարկային տեսուչներ առանց սահմանների - քրեական քննություն» պիլոտային ծրագրի և «Հարկային տեսուչներ առանց սահմանների - տրանսֆերային

գնագոյացում» ծրագրերի գործողությունների պլանների պաշտոնական հաստատման/ստորագրման արարողության ժամանակ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Միքայել Փաշայանի և Իտալիայի հարկային ծառայության նախագահի տեղակալ Վալերիո Բարբանտինիի կողմից ստորագրվել են «Հարկային տեսուչներ առանց սահմանների» ծրագրի և «Հարկային տեսուչներ առանց սահմանների քրեական հետաքննություն» ծրագրերի աշխատանքային պլանները:

«Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման» գլոբալ ֆորումի լիագումար նիստի ընթացքում ներկայացվել են հարկային թափանցիկության բնագավառում առաջիկա մարտահրավերները և դրանց լուծման ճանապարհները:

Հայաստանի հարկային վարչարարությանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում ճանաչողական այցի ընթացքում որոշվել է ստեղծել ֆրանս-հայկական համատեղ աշխատանքային խումբ ֆրանսիական ստուգման համակարգը Հայաստանում նույնպես ներդնելու և կիրառելու համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

«Հարկային տեսուչներ առանց սահմանների - քրեական քննություն» պիլոտային ծրագրի և «Հարկային տեսուչներ առանց սահմանների - տրանսֆերային գնագոյացում» ծրագրերի գործողությունների պլանների պաշտոնական հաստատման/ստորագրման արարողության ընթացքում ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Մ.Փաշայանը ներկայացրել է կոմիտեի՝ նորագույն տեխնոլոգիական լուծումներով, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և կիրառման փորձը, ինչպես նաև կարևորել առաջավոր երկրների հարկային ծառայությունների հետ ակտիվ գործընկերությունը, որն օգնում է ճշգրիտ վերհանել մարտահրավերները

և արդյունավետ աշխատել հետագա համագործակցության ընդլայնման և բարելավման ուղղությամբ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա քայլերի իրականացման շուրջ, ինչը կհանգեցնի ՏՀԶԿ հետ հարաբերությունների խորացմանը և կնպաստի ֆորումին ՊԵԿ անդամակցության դյուրացմանը:

«Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման» Գլոբալ ֆորումի լիագումար նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել զարգացող երկրներում հարկային թափանցիկության ստանդարտի տեղայնացման ուղղությամբ Ֆորումի հսկայական տեխնիկական ծրագրերի իրականացման եղանակներին և արդյունավետությանը:

Հայաստանի հարկային վարչարարությանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում ճանաչողական այցի ընթացքում կայացած քննարկումները և որոշումները կնպաստեն հարկային ոլորտում ստվերային տնտեսության կրճատմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

04.12.2019թ.